ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 Նոյեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

160
(2826)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԱԽ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԴԻՔԱԾ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ եւ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, հեղափոխությունից հետո բազմաթիվ հանրահավաքներ վարելով, ստացավ ամենացանկալի պաշտոնը: 2018 թվականից այս պաշտոնը զբաղեցնելով՝ Արմեն Գրիգորյանը քիչ ունեցվածք չի դիզել: Ուշագրավն այն է, որ 2018 թվականին, երբ նոր էր նշանակվել ԱԽ քարտուղարի պաշտոնին, աշխատանքի դիմաց ստացած վարձատրությունը այդ տարվա ընթացքում կազմել է 14 մլն 105 հազար դրամ: Այժմ, երբ գրեթե 5 տարի Գրիգորյանը պաշտոնավարում է, նրա միայն աշխատանքի վարձատրությունը կազմել է 21 մլն 909 հազար դրամ: Ստացվում է, որ միշտ գործուղումների եւ կարեւոր հանդիպումների մեկնող Գրիգորյանի աշխատանքի վարձատրությունը գրեթե կրկնապատկվել է: 2018 թվականին Գրիգորյանը անշարժ գույք չի հայտարարագրել, սակայն 2020 թվականի հաշվետու տարվա ընթացքում ձեռք է բերել նոր բնակարան Երեւանի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերից մեկում: Գրիգորյանը նախկինում մեքենա չի ունեցել, սակայն Անվտանգության խորհրդի քարտուղար նշանակվելուց հետո՝ հաջորդ տարի՝ հունվարին, նոր մեքենա է ձեռք բերել. 2019 թվականի հունվարի 22-ին գնել է Lexus մակնիշի մեքենա՝ արտադրված 2005 թվականին: Նախկինում ընտրական խառնաշփոթների մեջ խառնված՝ Գրիգորյանը հարուստ կենսագրություն չունի: Նա եղել է ՀՀ նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանի նախընտրական շտաբի պետ: 2015 թվականի Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ժամանակահատվածում համակարգել է «Քաղաքացի դիտորդ» դիտորդական առաքելությունը, որին ներգրավված են եղել ավելի քան 1000 դիտորդներ: 2017 թվականի ապրիլին՝ ՀՀ ԱԺ ընտրությունների ընթացքում, համակարգել է «Քաղաքացի դիտորդ» դիտորդական առաքելությունը: 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին մասնակցել է Հայաստանում տեղի ունեցող Թավշյա հեղափոխությանը: Այսպիսի կարճ գործունեություն ծավալած քարտուղարի բանկային հաշիվների մնացորդները 2022 թվականին կազմել են 1 մլն 685 հազար դրամ, իսկ տարեկան եկամուտները՝ 27 մլն 454 հազար դրամ: Ստացվում է, որ Գրիգորյանն էլ այն անտուն ՔՊ-ականներից է, որ հեղափոխությունից հետո նոր տուն գնեց եւ մեքենա ունեցավ: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 47 մլն 18 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեքի մայր գումարն է: Նա ՊԵԿ-ից ստացել է 5 մլն 545 հազար դրամ, որը եկամտահարկի սկզբունքով հիփոթեքի մայր գումարը մարելու համար է: Բացի սա, Գրիգորյանը վարկերը մարելուն ուղղել է 6 մլն 429 հազար դրամ: Հավելենք նաեւ, որ Արմեն Գրիգորյանն այն հայտնի անցյալ ունեցող քաղաքական գործիչն է, ում չեն կարողանում պաշտոնից հեռացել: ՔՊ-ում ժամանակ առ ժամանակ նրանից դժգոհություն է հասունանում, ապա՝ նույնքան արագ մարում:



Հաջորդ շաբաթ ԱԺ-ում թեժ է լինելու: Երեքշաբթի օրվանից՝ նոյեմբերի 14-ից, մեկնարկելու է ԱԺ նստաշրջանը, որի ժամանակ քննարկվելու է 2024թ.-ի պետբյուջեն: ԱԺ են գնալու Նիկոլ Փաշինյանը եւ նախարարները եւ ելույթներ են ունենալու պետբյուջեի վերաբերյալ: «Հայաստան» խմբակցությունից տեղեկացանք, որ մասնակցելու են նիստերին: Խորհրդարան է գնալու նաեւ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի որդին՝ Լեւոն Քոչարյանը, որը նոյեմբերի 6-ին էր մանդատ ստացել: «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանն էլ մեզ հետ զրույցում ասաց. «Նիստերին մասնակցելու ենք»: Չորեքշաբթի նույնպես նախարարները եւ Նիկոլ Փաշինյանը կգնան ԱԺ՝ պատասխանելու պատգամավորների հարցերին: Մինչ նիստերի մեկնարկը իշխող ՔՊ խմբակցությունը երկուշաբթի երեկոյան խմբակցության նիստ կանի՝ քննարկելու ԱԺ մեկնարկելիք նստաշրջանի հետ կապված օրակարգային հարցեր: Հավելենք, որ պետբյուջեի քննարկումն ընթանալու է երկու փուլով. հաջորդ շաբաթ ԱԺ-ում ներկայացվելուց հետո քննարկումն ընդմիջվելու է մինչեւ մյուս նստաշրջան: Այդ ընթացքում պատգամավորներն իրենց գրավոր առաջարկները կներկայացնեն պետբյուջեի մասով: Արդեն դեկտեմբերին մեկնարկելիք ԱԺ նստաշրջանի ժամանակ բյուջեն կդրվի վերջնական քվեարկության եւ օրենսդիր մարմնի հաստատմանը: Այսպիսով, ինչպես եւ սպասվում էր, ԱԺ նիստերը թեժ են լինելու:

Այս տարվա հունիսին առեղծվածային պայմաններում Սվաճյան փողոցի շենքերից մեկի 1-ին հարկի տանիքում մահացած հայտնաբերված հաղորդավարուհի, բլոգեր Օվսաննա Սողոյանի գործով հարցաքննվել են մի շարք անձինք, հարազատները, ինչպես նաեւ ամուսինը: Ավելին՝ մեզ հայտնի դարձավ, որ դեպքից անցել է գրեթե մեկ ամիս, եւ Քննչական կոմիտեում քննվող քրեական գործով նավաքննությունը շարունակվում է: Այս ցավալի դեպքը շատերի մոտ հարցեր առաջացրեց, թե ինչ է կատարվել հաղորդավարուհու եւ նրա երեխայի հետ, որ նրանք ցած էին նետվել պատուհանից: Նետվե՞լ էին, թե՞ նետել էին նրանց: Հիշեցնենք՝ հունիսի 1-ին՝ Ժամը 12:00-ի սահմաններում, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մալաթիայի բաժին ահազանգ է ստացվել, որ Սվաճյան փողոցի շենքերից մեկի 1-ին հարկի տանիքում կնոջ դի կա եւ վիրավոր երեխա: Ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ նշված վայրից ծայրահեղ ծանր վիճակում բժիշկները հիվանդանոց են տեղափոխել մոտ 1 տարեկան տղա երեխայի: Մինչ դեպքի վայրում աշխատում էր քննչական խումբը, Երեւանի «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնից ահազանգ է ստացվում Ոստիկանության Մալաթիայի բաժին, որ երեխան, գիտակցության չգալով, մահացել է: Ավելի ուշ պարզվեց, որ մահացած կինը հաղորդավար եւ բլոգեր Օվսաննա Սողոյանն է:

Պաշտպանության նախարարի խորհրդական, Սյունիքի նախկին մարզպետ Մելիքսեթ Պողոսյանի որդու գործը Սյունիքի դատարանում տեղից չի շարժվում: Գործը գրեթե մեկ տարի է՝ դատարանում է, բայց այս ընթացքում քրեական գործը մեկ այլ դատարան է տեղափոխվում, մեկ պաշտպանները չկան, մեկ տուժողները, ու այսպես մատների վրա կարելի է հաշվել, թե քանի նիստ է եղել 1 տարվա մեջ: Միգուցե այսպես ձգձգելով՝ փորձում են փրկել նախկին մարզպետի որդուն: Հիշեցնենք, որ 2021թ. Սյունիքի նախկին մարզպետ, ՔՊ-ական Մելիքսեթ Պողոսյանի որդին եւ մյուս նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի մտերիմները կարողացել էին համաձայնության հասնել եւ հաշտվել, ավելին՝ նախաքննական մարմինը որեւէ առերեսում չարեց կողմերի հետ, ու այս վիճակով գործով նախաքննության ավարտ է հայտարարվել: Ինչպես հայտնի է, 2021 թվականի հուլիսի 15-ի ուշ երեկոյան կրակոցներ էին հնչել Գորիս քաղաքում, ինչի հետեւանքով նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի մտերիմներից մեկը վիրավորվել էր, եւ նրան տեղափոխել էին Երեւան: Այնուհետեւ հայտնի դարձավ, որ կրակոցի կիզակետում է հայտնվել Սյունիքի նախկին մարզպետ Մելիքսեթ Պողոսյանի որդին՝ Կարեն Պողոսյանը, քանի որ նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի մտերիմներն ու Մելիքսեթ Պողոսյանի որդին հին հաշիվներ են ունեցել:

ԶՐՈՒՅՑ

ՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ՆԻՍՏԵՐԻՆ

Նախկին քաղաքապետ, դերասան Հայկ Մարությանը ավագանու ընտրություններից հետո հայտարարել էր, որ ամբողջական իշխանափոխության օրակարգով է վերադառնում քաղաքականություն, սակայն մինչ օրս չի մասնակցում ավագանու նիստերին, ոչ էլ հայտարարություններով է հանդես գալիս: Ո՞ւր է կորել նախկին քաղաքապետը, ինչու՞ չի մասնակցում նիստերին:

Այս եւ այլ հարցերի շուրջ զրուցել ենք ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Նարե Արամյանի հետ:

-Տիկի՛ն Արամյան, Հայկ Մարությանը վերցրել է ավագանու մանդատը, բայց նիստերին չի մասնակցում, ու՞ր է կորել նա, ինչո՞վ է այժմ զբաղված:

-Մենք բոլորս, այդ թվում՝ Հայկ Մարությանը, զբաղվում ենք բռնի տեղահանված արցախցիներին օգնություն տրամադրելու հարցով, այն աշխատանքներով, քաղաքային զարգացման ու հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակմամբ ենք զբաղված: Մենք առաջիկայում եւ՛ հայտարարություններով ենք հանդես գալու, եւ՛ տարբեր նախագծերով: Երբ մենք գնում էինք ընտրությունների, մենք քաջ գիտակցում էինք, որ ինչ հետեւանքներ կարող է դա ունենալ, եւ ինչպիսին պետք է լինի մեր դիրքորոշումը:

-Նոյեմբերի 21-ի ավագանու նիստին մասնակցելու՞ է:

-Ես չեմ կարող ասել, քանի որ դեռ նիստի օրակարգը չգիտենք: Հաջորդ շաբաթ կհստակեցնենք մեր՝ նիստի մասնակցությունը:

-Թե՛ ավագանու ընտրություններում ձեզ ձայն տված քաղաքացիները, թե՛ լրագրողները ձեզ հետ գալիս, շփվում են, բայց նրանցից շատերը հարցեր ունեն անձամբ Հայկ Մարությանին: Տպավորություն է, որ նա կա՛մ խուսափում է, կա՛մ չի ցանկանում, կա՛մ էլ ժամանակ չունի շփումների համար:

-Ես գիտեմ, որ մեզանից որեւէ մեկը երբեւէ խույս չի տվել շփումներից, ինչ վերաբերում է Մարությանին, կարծում եմ, որ պատճառը զբաղվածությունն է: Առաջիկայում թե՛ բրիֆինգների, թե՛ ասուլիսների, թե՛ անհատական հարցազրույցների տեսքով Հայկ Մարությանի մասնակցությունն այս ոլորտում եւս կերեւա:

-Ընտրություններից առաջ հայտարարել էիք, որ մասնակցում եք ամբողջական իշխանափոխության օրակարգով. սա դեռ մնու՞մ է ուժի մեջ, ի՞նչ մեթոդներով եք հասնելու ամբողջական իշխանափոխության:

-Դա չի կարող փոխվել, չկա որեւէ ընդդիմություն, որը հակառակ մոտեցումն ունի: Հասկանալի են այս խառնիճաղանջ օրերում ընդդիմության հետ նույնականացվող վարքը եւ հետագայում կտրուկ փոփոխված դիրքորոշումները.. այդուհանդերձ, այո՛, իշխանափոխություն պետք է լինի:

-Ի՞նչ մեթոդներով եք հասնելու դրան:

-Մեթոդները պետք է համապատասխանեն օրենքներին եւ մարդու իրավունքներից բխող սկզբունքներին: Այստեղ կարեւոր է հասկանալ, թե իրավական ինչ ճանապարհներ կան դրան հասնելու համար: Երեւանում կայացած ընտրությունները ցույց տվեցին, թե ինչպիսի դիրքորոշում ունեն Երեւանի բնակիչները: Քաղաքացիներն ունեն լրիվ այլ վերաբերմունք ընտրությունների նկատմամբ, ուստի իշխանափոխություն, առնվազն՝ մայրաքաղաքում, հնարավոր է, ուստի մենք պայքարելու ենք նաեւ դրա համար եւ միայն խաղաղ միջոցներով:

-Տիկի՛ն Արամյան, տեսնում ենք, որ ավագանու անդամները՝ թե՛ ՔՊ-ի, թե՛ «Հանրապետություն» կուսակցության, թե՛ «Հանրային ձայն»-ի, սուր ձեւով քննադատում են Հայկ Մարությանին, ասում են՝ա՛յ, թող գա Մարությանը, ու կտեսնեք՝ թե ինչ ենք անելու, նրա դեմքին, ինչ պետք է, կասենք: Միգուցե սա՞ է պատճառը, որ Մարությանը խուսափում է ավագանու նիստերին ներկայանալուց:

-Մեր օրերում տարօրինակ չէ այն, ինչ անվանում ենք քննադատություն. հաճախ դա ուղղակի անցնում է քննադատության եւ բարոյականության սահմանը, միեւնույնն է, նման խնդիրները, որքան էլ թվում են անհաղթահարելի, իրականում հաղթահարելի են: Խնդիրն այն է, թե որն է իրական նպատակը: Եթե մենք քննադատություններից վախենայինք, դրանք մեզ կանգնեցնեին, ապա որեւէ հասարակական գործունեություն չէինք կարող ծավալել: Քննադատողներ միշտ էլ լինում են, բայց դրանք հիմնականում ոչ միայն չունեն հիմք, հաճախ բխում են ներանձնային եւ ներխմբակային շահերից:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿՄԱՍՆԱԿՑԻ ՆԻՍՏԻ

Ինչպես հայտնի է, երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի որդին՝ Լեւոն Քոչարյանը, նոյեմբերի 6-ին պատգամավորական մանդատ ստացավ:

Լեւոն Քոչարյանը, հիշեցնենք, կալանավորվել էր սեպտեմբերի 25-ին՝ խաղաղ ցույցի ժամանակ իբրեւ կարմիրբերետավորների՝ ճանապարհը բացելու պահանջը չկատարելու եւ ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնություն գործադրելու մեղադրանքով, թեեւ տարածված տեսանյութում երեւում է, թե Լեւոն Քոչարյանին բերման ենթարկելիս իրավապահներն ինչպես են հարվածում նրան:

Պատգամավորական մանդատ ստանալուց հետո, օրենքի պահանջով, նա ազատ արձակվեց, որպեսզի ստանձնի պատգամավորական մանդատը:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Լեւոն Քոչարյանը պատրաստվում է մասնակցել ԱԺ առաջիկա նիստին եւ ստանձնել պատգամավորի մանդատը:

Հիշեցնենք, որ ԱԺ նիստերը մեկնարկում են հոկտեմբերի 14-ից:

ՀՀ ԱԳՆ-Ն ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

ՀՀ ԱԳՆ խոսնակ Անի Բադալյանի մեկնաբանությունը՝ ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցչի հայտարարության վերաբերյալ.

«Հայաստանի Հանրապետության կառավարությունը բոլորովին վերջերս հրապարակել է «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, որի հիմնարար սկզբունքներից ակնհայտ է դառնում, որ տարածաշրջանային կոմունիկացիաների բացման դեպքում Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում իր պետական ինստիտուտների միջոցով պետք է իրականացնի սահմանային, մաքսային հսկողություն: Բացի դա, ՀՀ ԱԱԾ-ում վերջերս ստեղծվել է հատուկ ստորաբաժանում, որի խնդիրը տարածաշրջանային կոմունիկացիաների բացման դեպքում այդ կոմունիկացիաների, ինչպես նաեւ դրանցով ապրանքների, բեռների, տրանսպորտային միջոցների եւ մարդկանց անցման անվտանգության ապահովումն է:

Հայաստանի Հանրապետությունը երբեւէ որեւէ փաստաթղթով չի համաձայնվել իր սուվերենության որեւէ սահմանափակման, եւ իր սուվերեն տարածքի որեւէ հատվածի վրա երրորդ երկրի վերահսկողություն հաստատվել չի կարող»,-ասված է հաղորդագրության մեջ:

ԱՐՁԱԿՈՒՐԴ Է ՄԵԿՆԵԼ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն արձակուրդ է մեկնել:

Նա նոյեմբերի 9-13-ը ներառյալ գտնվելու է ամենամյա արձակուրդում:

Այս ընթացքում նրա պարտականությունները ժամանակավոր կկատարի ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը:

Հիշեցնենք, որ ԱԺ նիստերը մեկնարկում են հաջորդ շաբաթ՝ նոյեմբերի 14-ից:

ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՐԿ ՉԿԱ

Սեպտեմբերի 19-ի ռազմական գործողություններից եւ Արցախը հանձնելուց հետո Արցախը լքեցին շուրջ 120 հազար մարդ: Ստեղծված իրավիճակից հետո գրեթե բոլոր բնակիչները լքել էին Արցախը, եւ ռուս խաղաղապահները, որոնք 2020 թվականի պատերազմից հետո տեղակայվել էին Արցախում՝ բնակիչների անվտանգությունը պահպանելու համար, այլեւս ոչ ոքի պաշտպանելու կարիք չունեին: ArmLur.am-ը հարցումով դիմել էր ՀՀ կառավարություն՝ հասկանալու համար՝ ինչպես է կարգավորվելու խաղաղապահների գործունեությունը: Հարցման մեջ մասնավորապես ասվում էր՝ ինչ պայմանավորվածություններ կան ՌԴ պաշտպանության նախարարության հետ ռուս խաղաղապահների վերաբերյալ, ով է հսկելու հայ-ադրբեջանական սահմանը Բերձորի հատվածում, եթե փակվում են ՌԴ խաղաղապահների անցակետերը եւ այլն: Հարցմանն ի պատասխան՝ 30-օրյա ժամկետի պահանջից հետո Կառավարությունից մեզ պատասխանեցին. «Լեռնային Ղարաբաղում տեղակայված Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախմբի հետագա գործունեությանը վերաբերող հարցերը որոշվում են Ռուսաստան-Ադրբեջան երկխոսության շրջանակներում»: Ստացվում է, որ ՀՀ իշխանությունների հայտարարությունները, թե Արցախը Ադրբեջանի մաս է, արտահայտվում է անտարբեր գործողություններով: Այսինքն՝ Հայաստանի իշխանություններն ամբողջությամբ հրաժարվեցին եւ՛ Արցախից, եւ՛ Արցախի վերաբերյալ բանակցություններից:

ԱՆՑԱԿԵՏԸ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ Է

Արդեն 2-3 օր Հայաստան-Վրաստան սահմանի Բագրատաշենի անցակետում՝ Վրաստանի տարածքում գտնվող բեռնատարների վարորդները հայկական անցակետի վատ աշխատանքի հետեւանքով չեն կարողանում մուտք գործել Հայաստան: Քաղաքացիները ահազանգում են, որ նման հերթեր բեռնափոխադրման ամենաթեժ շրջանում չի եղել: AmLur.am-ը կապվեց Պետական եկամուտների կոմիտեի հետ, որտեղից մեզ հայտնեցին. «Այդ տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը: Բագրատաշենի անցակետը գործում է բնականոն հունով, սակայն որոշ ծանրաբեռնվածությամբ»:

ԲԱՆԱՁԵՎ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

ԱՄՆ Դեմոկրատ կոնգրեսական Ադամ Շիֆը բանաձեւ է ներկայացրել Միացյալ Նահանգների Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ, որով պահանջում է Բաքվից անհապաղ ազատ արձակել հայ ռազմագերիներին, գերեվարված քաղաքացիական անձանց եւ քաղբանտարկյալներին, այդ թվում՝ Արցախի կառավարության պաշտոնյաներին, որոնք ապօրինաբար կալանավորվել են անցյալ ամիս Ադրբեջանի էթնիկ զտումների ժամանակ: Այս մասին հաղորդում է Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը (ANCA): Բանաձեւը, մասնավորապես, կոչ է անում Բայդենի վարչակազմին պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի պետական պաշտոնյաների նկատմամբ, որոնք պատասխանատու են հայ ռազմագերիների անօրինական կալանավորման, խոշտանգումների եւ արտադատական սպանությունների համար: Այն կրկնում է նաեւ Ադրբեջանին ԱՄՆ ռազմական եւ անվտանգության աջակցության վերաբերյալ 907-րդ հոդվածի կիրառումը սահմանափակելու մասին Կոնգրեսի կոչերը: «Ադրբեջանը պետք է անհապաղ եւ անվերապահորեն ազատ արձակի ապօրինի պահվող Արցախի բոլոր պաշտոնյաներին, ռազմագերիներին եւ այլ կալանավորներին ոչ թե փոխանակման եղանակով, որպես Բաքվի կողմից մարդկային տառապանքի դաժան ապրանքափոխման մաս, այլ ավելի շուտ միջազգային իրավունքով ստանձնած իր պարտավորություններին համապատասխան»,- ասվում է Հայ Դատի հանձնախմբի հայտարարությունում:

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«GALLUP»-ը ներկայացրել է ՀՀ անվտանգային եւ ներքաղաքական խնդիրների վերաբերյալ հարցումների արդյունքները: Սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի զինված հարձակման պատճառով Արցախը լիովին հայաթափվեց եւ ավելի քան 100,000 մարդ տեղահանվեց ու գաղթեց Հայաստան: ՀՀ-ն պետք է պայքարի անկախ Արցախի Հանրապետության համար, որից հետո արցախահայությունը պետք է վերադառնա իրենց տները: Հարցվածների 46,6%-ը այսպես է պատասխանել վերոնշյալ հարցին, 40%-ը պատասխանել է, որ ՀՀ-ն պետք է ինտեգրի արցախցիներին եւ հոգ տանի սոցիալական ու այլ իրավունքների համար: 9,2%-ը կարծում է, որ ՀՀ-ն պետք է անի առավելագույնը, որպեսզի Արցախի հայությունը հնարավորություն ունենա վերադառնալ Արցախ եւ ստանա անհրաժեշտ անվտանգային ու սոցիալական հարցերի լուծում՝ ազգային փոքրամասնության կամ այլ կարգավիճակով՝ Ադրբեջանի կազմում, 3,2 %-ը դժվարացել է պատասխանել այս հարցին:

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՉԿԱՐ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Արեւմուտքի հետ հարաբերությունները, եթե փորձենք շերտերի բաժանել, երեք կարեւոր շերտ ունի»,- նոյեմբերի 10-ին՝ Բրյուսելում անցկացվող «Հայաստան-Եվրոպա» համաժողովի ժամանակ, նշեց Հայաստանի Ախ քարտուղար Արմեն Գրիգորյանը:

«Այս առումով՝ գործադիր, օրենսդիր, քաղաքացիական հասարակություն, տնտեսություն, այս երեք շերտերով պետք է կարողանանք ուժեղ համագործակցություն կառուցել: Քաղաքացիական եւ էքսպերտային համայնքի աշխատանքը, որ հիմա դուք կատարում եք, շատ գնահատելի է: Վերջին շրջանում, իսկապես, ինտենսիվ երկխոսություն կա ԵՄ-ի եւ ԵՄ երկրների հետ: Բացվել են նոր հնարավորություններ, որոնք տարբեր տեսակի են: Երեւի անվտանգության թեմայով մենք նախկինում այսպիսի ինտենսիվ երկխոսություն Արեւմուտքի, Եվրոպայի հետ երբեք չենք ունեցել: Ֆրանսիայի հետ ռազմական ոլորտում համագործակցության մեծ առաջընթաց ենք գրանցել, բայց ակնկալիքներ ունենք, որ ե՛ւ հավաքական Եվրոպայի, ե՛ւ անհատական երկրների հետ մենք կարողանալու ենք ամրապնդել մեր անվտանգային համագործակցությունը: Ըսդ որում՝ դրա տակ ես միայն նկատի չունեմ ռազմականը:

Նույնիսկ կարող եմ ասել, որ մեր տնտեսական համագործակցությունը կարող է իր ենթատեքստում ունենալ անվտանգության բաղադրիչ եւ ամրապնդել ՀՀ անվտանգությունը: Հայաստանը պատրաստ է սրան»,-ասաց նա:

Ախ քարտուղարն ընդգծեց, որ Եվրախորհրդարանում ՀՀ վարչապետի ելույթի հիմնական մեսիջներից մեկն այն է, որ Հայաստանը պատրաստ է այնքան, որքան պատրաստ է Եվրոպան. «Մենք ցույց ենք տվել կամք առաջ գնալու համագործակցության առումով»:

Անդրադառնալով Գրանադայում տեղի ունեցած քառակողմ հանդիպմանը, Արմեն Գրիգորյանն ասաց, որ դա շատ կարեւոր էր նաեւ Հայաստան-ԵՄ համագործակցության, տարածաշրջանում խաղաղություն ու կայունություն հաստատելու համատեքստում. «Նիկոլ Փաշինյանի եւ Ֆոն դեր Լայենի հանդիպման արդյունքում ընդունված հայտարարությունում նշվում է, որ մեր հարաբերությունները նաեւ հիմնված են արժեքների վրա»:

«Կար պլանավորված հանդիպում առաջնորդների մակարդակով, որը պետք է տեղի ունենար հոկտեմբերի վերջին, Հայաստանը պատրաստակամություն էր հայտնել գալ այդ հանդիպմանը, բայց, ցավոք, հանդիպումը տեղի չի ունեցել: Մենք հույս ունենք, որ մոտ ապագայում դա հնարավոր կլինի»,- Բրյուսելում հայտարարել է Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը.

«Հայաստանը պատրաստ է Բրյուսելում եռակողմ հանդիպմանը: Հայաստանը պատրաստ է խաղաղության:

Մենք մանդատ ենք ստացել խաղաղության հաստատման համար: Մենք այս պահին ուզում ենք, որ հստակեցվի Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ սահմանը, հրապարակային հաստատվի 29,800 քառակուսի կիլոմետր ՀՀ տարածքային ամբողջականությունը, ապաշրջափակումը տեղի ունենա չորս սկզբունքների հիման վրա:

Սրանք կարեւոր սկզբունքներ են, որոնց շուրջ մենք պատրաստ ենք բանակցություններն ավարտին հասցնել, ինչպես նաեւ լուծել հումանիտար բոլոր այն խնդիրները, որոնք կան: Կարեւոր հարցերից մեկը գերիների վերադարձն է ու խաղաղության հաստատումը:

Հայաստանը պատրաստ է այս օրակարգով շարունակել բանակցությունները, գալ Բրյուսել, հասնել վերջնակետի ու կնքել խաղաղության պայմանագիրը», - ընդգծել է ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարը:

Հայաստանում կա եվրաինտեգրման գաղափար, բայց նաեւ կա ոչ բլոկային պետություն դառնալու գաղափարը:

«Մենք լսում ենք քաղաքացիական հասարակությանը ու փորձում ենք հասկանալ, թե Հայաստանի համար որոնք են լավագույն գործիքները, որ կարող են եւ՛ անվտանգություն, եւ՛ զարգացում ապահովել ու տարածաշրջանում ունենալ խաղաղություն»,- նշեց նա:

Նա ասաց, որ Հայաստանը համոզվել է, որ ժողովրդավարությունը լավագույն գործիքն է՝ հասցեագրելու ներքին խնդիրները:

«Հիմա մեր հանրության մեջ ամենամեծ հարցը դա է՝ արդյոք ժողովրդավարությունը նաեւ կարող է արտաքին անվտանգություն ապահովել: Իսկապես, Հայաստանի ժողովրդավարությունը հաճախ թիրախավորվում է, ու դրանից պաշտպանվելու համար անհրաժեշտ է, որ Հայաստանը լուրջ աջակցություն ստանա՝ դիվերսիֆիկացնելու իր տնտեսությունը, անվտանգության ոլորտում իր ռեսուրսները»,- նշեց ՀՀ Ախ քարտուղարը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ Անանա Հակոբյանի հետ Ելիսեյան պալատում մասնակցել է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի եւ տիկին Բրիժիտ Մակրոնի անունից ի պատիվ «Փարիզի խաղաղության 6-րդ համաժողովի» մասնակից պետությունների, կառավարությունների եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարների տրված պաշտոնական ընթրիքին:

Ելիսեյան պալատում տեղի է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հանդիպումը: Այս մասին հայտնում են ՀՀ կառավարությունից:

Ֆրանսիայի նախագահը նախ իր ցավակցություններն է հայտնել վարչապետին ՅՈՒՆԵՍԿՕ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունում ՀՀ վարչապետի անձնական ներկայացուցիչ Քրիստիան Տեր-Ստեփանյանի մահվան կապակցությամբ: Էմանուել Մակրոնը եւս մեկ անգամ շեշտել է Ֆրանսիայի աջակցությունը Հայաստանին՝ հետագա զարգացման ու առկա մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ: Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել ջերմ հյուրընկալության եւ ցավակցությունների համար: Վարչապետը կարեւորել է հայ-ֆրանսիական համագործակցության զարգացումը բոլոր ոլորտներում եւ շեշտել ՀՀ կառավարության շահագրգռվածությունն այդ հարցում: Զրուցակիցները քննարկել են Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացին վերաբերող հարցեր: Շեշտվել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման հարցում Հայաստանի վարչապետի, Ֆրանսիայի նախագահի, Գերմանիայի կանցլերի եւ Եվրոպական խորհրդի նախագահի Գրանադայի քառակողմ հայտարարության մեջ տեղ գտած սկզբունքների կարեւորությունը: Անդրադարձ է կատարվել Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի կողմից էթնիկ զտման քաղաքականության հետեւանքով 100 հազարից ավելի բռնի տեղահանված անձանց հումանիտար խնդիրներին, ինչպես նաեւ հաղթահարման ուղղությամբ Հայաստանի կառավարության կողմից իրականացվող քայլերին: Կարեւորվել է միջազգային հանրության օժանդակությունը առկա խնդիրների լուծման գործում: Քննարկվել են նաեւ տնտեսության, ենթակառուցվածքների զարգացման եւ այլ ոլորտներում հայ-ֆրանսիական հետագա համագործակցության խորացմանն ու ընդլայնմանը վերաբերող հարցեր: Կողմերը պատրաստակամություն են հայտնել հետեւողականորեն շարունակել աշխատանքներն այդ ուղղությամբ: Մտքեր են փոխանակվել տարածաշրջանային խաղաղության եւ կայունության, ինչպես նաեւ Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության շուրջ:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԱԱԾ ԵՎ ՊԵԿ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԱՌԱՔԱՆՈՒ ՄԵՋ ԹՄՐԱՆՅՈՒԹ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչությունը շարունակում է անզիջում պայքարը թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի՝ Հայաստանի Հանրապետության սահմանով անօրինական տեղափոխման ուղղությամբ:

Օրերս կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության «Զվարթնոց» բաժնի եւ ԱՄՎ բացթողնման բաժնի աշխատակիցները համատեղ «Կարգո» բեռնային համալիրի մաքսային հսկողության գոտում մաքսային հսկողության են ենթարկել ԱՄՆ-ից ՀՀ ներմուծված միջազգային սուրհանդակային առաքանին: Բացի անձնական օգտագործման առարկաներից, հայտնաբերվել է 5 ապակե տարա՝ ընդհանուր 1085 գրամ քաշով, որոնք լցված են եղել «հաշիշի յուղ» տեսակի թմրամիջոցով:

Հիշյալ մաքսանենգության դեպքով Մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցները, փոստային փոխադրումներ իրականացնող ընկերության գրասենյակի շրջակայքից առաքանին ստանալուց հետո ձերբակալել են ՀՀ քաղաքացու: Մաքսանենգության դեմ պայքարի վարչություն տեղափոխվելուց հետո վերջինս ենթարկվել է ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության, որից հետո քաղաքացին տեղափոխվել է ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն: Հարուցված քրեական վարույթի շրջանակում վերջինս ձերբակալվել է:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ձեռք են բերվել տեղեկություններ առ այն, որ ձերբակալված անձը փոխկապակցված է մի քանի այլ բաժանորդների հետ, որոնք մշտապես առաքանիներ են ստանում նույն փոխադրողի միջոցով:

Տեղեկություններ էին ստացվել, որ ԱՄՆ-ից ՀՀ ներմուծված միջազգային սուրհանդակային առաքանու մեջ եւս, հնարավոր է, առկա լինեն թմրամիջոցներ: Օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցների կողմից այս տեղեկատվությունը տրամադրվել է «Զվարթնոց» բաժնի աշխատակիցներին, որոնք «Զվարթնոց» օդանավակայանի կարգո բեռնային համալիրի մաքսային հսկողության գոտում մաքսային զննման են ենթարկել առաքանին: Բացի մանկական գրատախտակից, հայտնաբերվել է 4 փաթեթ՝ 2 կգ քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի զանգվածների պարունակությամբ:

Առաքանին ստանալուց հետո՝ փոխադրող ընկերության գրասենյակից դուրս գալիս, ձերբակալվել եւ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչություն է տեղափոխվել ՀՀ քաղաքացի Ա. Պ.-ն, որտեղ վերջինս ենթարկվել է ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության:

ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության եւ ԱԱԾ տնտեսական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման գլխավոր վարչության աշխատակիցների հսկողությամբ՝ ձեռնարկված միջոցառումների շրջանակում ձերբակալված Ա.Պ-ն իրեն պատկանող տելեգրամյան օգտահաշվից կապ է հաստատել տելեգրամյան օգտատիրոջ հետ եւ վերջինիս հայտնել, որ առաքանին ստացել է: Նշված առաքանին փոխադրելու եւ այլ անձի հանձնելու համար տելեգրամյան օգտատերը Ա.Պ-ին փոխանցել է 80.000 ՀՀ դրամ: Պարզվել է նշված առաքանին ԱՄՆ-ից ուղարկողի ինքնությունը. այն փոխանցելուց հետո ձերբակալվել եւ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչություն է տեղափոխվել ՀՀ քաղաքացի Ա. Ս.-ն: Պարզվել է, որ վերջինիս անվամբ կա եւս մեկ ուղարկված առաքանի, ինչի զննման արդյունքում ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության եւ ՀՀ ԱԱԾ տնտեսական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման գլխավոր վարչության աշխատակիցների կողմից հայտնաբերվել է շուրջ 2 կգ քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցին նմանվող զանգված: Տեղեկություններ են ստացվել նաեւ, որ ԱՄՆ-ից Ա. Պ.-ի անվամբ ներմուծված 2 միջազգային սուրհանդակային առաքանիներում եւս առկա են թմրամիջոցներ: Դրանցում հայտնաբերվել է ՄԴՄԱ տեսակի թմրամիջոցի ածանցյալներ՝ 950 եւ 970 գրամ քաշերով, «մարիխուանա» տեսակի թմրամիջոց՝ ընդհանուր 1.2 կգ քաշով: Մեկ այլ դրվագով տեղեկություններ են ստացվել, որ ԱՄՆ-ից նույն ուղարկողի կողմից Հայաստան է ներմուծվելու միջազգային սուրհանդակային առաքանի: ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցները մաքսանենգության այս դեպքով ձեռնարկել են անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Արդյունքում «մարիխուանա», «հաշիշ» եւ «հաշիշի յուղ» տեսակների թմրամիջոցների զանգվածները ստանալուց հետո Գյումրի քաղաքում ձերբակալվել եւ ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչություն է տեղափոխվել ՀՀ 2 քաղաքացի:

Նշյալ 5 դեպքով ապօրինի շրջանառությունից դուրս է բերվել ավելի քան 5.5 կգ «մարիխուաննա» տեսակի թմրամիջոց, 1.3 կգ «հաշիշի յուղ» տեսակի թմրամիջոց, 0.5 կգ «հաշիշ» տեսակի թմրամիջոց եւ 1.9 կգ ՄԴՄԱ տեսակի թմրամիջոցի ածանցյալներ: ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության եւ ՀՀ ԱԱԾ տնտեսական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման գլխավոր վարչության աշխատակիցների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումները շարունակվում են՝ վերոնշյալ թմրամիջոցի ապօրինի շրջանառության մեջ ներգրավված հնարավոր այլ անձանց շրջանակը պարզելու ուղղությամբ:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՈՒՂՂՈՐԴԵԼ Է ԳՆՈՒՄՆԵՐ ԱՆԵԼ

Ավարտվել է Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական եւ սոցիալական զարգացման վարչության պետի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը: ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում իրականացված քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ 2016թ. մարտից մինչեւ 2020թ. մարտն ընկած ժամանակահատվածում Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական եւ սոցիալական զարգացման վարչության պետի պաշտոնը զբաղեցրած Շ.Վ.-ն, պաշտոնավարման ընթացքում, որպես հանրային ծառայող, ունենալով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար օրենքով սահմանված արգելք, 2012թ. հունվարի 23-ին իր կնոջ մորաքրոջ անվամբ հիմնադրել է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ԱՁ: Այն մշտապես կառավարել է անձամբ, համակարգել է դրա գործունեությունը, կազմել է ֆինանսական հաշվետվությունները, կատարել ԱՁ-ի գործունեության հետ կապված փաստաթղթաշրջանառությունը, իսկ ԱՁ-ի անունից բոլոր փաստաթղթերը կազմվել ու կնքվել են նրա պահանջով եւ գիտությամբ: Քննությամբ պարզվել է նաեւ, որ Շ.Վ.-ն, նշված ԱՁ-ի եւ ՍՊԸ-ի համար շահույթ ապահովելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, օգտվելով իր պաշտոնից բխող լիազորություններից, դրանց մրցակիցների համար անհավասար պայմաններ ստեղծելով, 2017թ. հունվարի 11-ից մինչեւ 2019թ. դեկտեմբերի 30-ը՝ ՍՊԸ-ին, իսկ 2016թ. ապրիլի 27-ից մինչեւ 2019թ. մարտի 12-ը ԱՁ-ին տրամադրել է մարզի համայնքապետարաններին, դրանց ենթակա կազմակերպություններին, հանրակրթական ոչ առեւտրային կազմակերպություններին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտմամբ, շուկայականից անհամեմատ բարձր գնով, տարբեր տնտեսական, կենցաղային ապրանքներ, ծաղիկ, շինանյութ, գրասենյակային գույք եւ կահույք վաճառելու, ինչպես նաեւ շինարարական աշխատանքների, փողոցների լուսավորության, սանիտարական մաքրման եւ աղբահանության աշխատանքներ կատարելու կամ միջոցառումների կազմակերպման ծառայություններ մատուցելու, դրանցից շահույթ ստանալու արտոնություններ ու առավելություններ: Այդկերպ ՍՊԸ-ին պատկանող խանութից կատարվել են ընդհանուր 102.243.710 ՀՀ դրամի, իսկ ԱՁ-ին պատկանող խանութից՝ ընդհանուր 48.671.710 ՀՀ դրամի գնումներ: Դա՝ այն դեպքում, երբ ԱՁ-ն զբաղվել է փաստացի միայն թեփի, ալյուրի, գարու, ցորենի եւ աղի վաճառքով:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական եւ սոցիալական զարգացման վարչության նախկին պետին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը) եւ 442-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը): Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

ԼՈՒՐԵՐ

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՔԱԴՐՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Կարեն Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով քննությամբ ինքնությունները դեռեւս չպարզված երկու անձանց հետ, 2023 թվականի մայիսի 12-ից մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածում հանցավոր մտադրությունը բարեհաջող ավարտին հասցնելու համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով վերջիներիս հետ մի քանի անգամ ժամանել է Երեւան քաղաքի Արշակունյաց պողոտայի 12 հասցե, այնուհետեւ նույն ժամանակահատվածում՝ քննությամբ չպարզված օրը եւ ժամին, հիշյալ հասցեում գործունեություն ծավալող «Երեւանի ոսկերչական գործարան» ԲԲ ընկերության շինության տանիքի օդատար խողովակների միջոցով ապօրինի մուտք են գործել շինության չորրորդ հարկ, ապա նույն հարկում գտնվող՝ ընկերության տնօրենի աշխատասենյակի դուռը տեխնիկական միջոցների գործադրմամբ ջարդելու միջոցով ապօրինի մուտք գործել հիշյալ աշխատասենյակ:

Հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու նպատակով Կ. Սարգսյանը քննությամբ ինքնությունը դեռեւս չպարզված անձանց հետ, փոխլրացնելով մեկը մյուսի գործողությունները, աշխատասենյակի պատը հատուկ սարքավորումների միջոցով քանդելու, ապա գույքի պահպանման եւ պաշտպանության համար նախատեսված չիրկիզվող մետաղյա պահարանների հետնամասը կտրելու եղանակով շրջանցել են գույքի պահպանության համար նախատեսված՝ հիշյալ գտնվող շինությունում գործունեություն ծավալող «Երեւանի ոսկերչական գործարան» ԲԲ ընկերության անվտանգության համակարգերը եւ հիշյալ պահարաններից գաղտնի հափշտակել առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 127.555.589 ՀՀ դրամ արժողությամբ թանկարժեք քարեր՝ ընկերությանը պատճառելով գույքային վնաս:

ԿԵՂԾ ՏՎՅԱԼՆԵՐ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Զաքար Հայրապետյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով Հայաստանի Հանրապետություն «Հակակոռուպցիոն ժողովրդական վերահսկողություն միություն» հասարակական կամզակերպության նախագահ, 2021 թվականի հունվարի 12-ին ՀՀ վարչապետին, ՀՀ պաշտպանության, ինչպես նաեւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություններ ներկայացնելու եղանակով օգտագործել է իրավունք վերապահող փաստաթուղթ հանդիսացող, կեղծ տվյալներ պարունակող, ՀԿ-ի կնիքով կնքված գրություններ եւ ՀԿ-ի թվով 17 անդամների տվյալները պարունակող ցուցակներ՝ այդկերպ փորձելով արցախյան պատերազմին մասնակցած անձանց հատկացվելիք պետական միջոցներից հափշտակել խոշոր չափի՝ 3269542 ՀՀ դրամի գումար, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չի հասցվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Նոյեմբերի 9-ից 10-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 62 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ Է ՍՏԵՂԾԵԼ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը, հաշվի առնելով «Մաունթեն Բիֆ Քոմփանի» ՍՊԸ նախագահ՝ «Տոհմային տավարաբուծության նախագիծ» գյուղատնտեսական կոոպերատիվի տնօրեն Մարտուն Պողոսյանի կողմից ՀՀ վարչապետին ուղղված գրությունը եւ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածների նախարարի՝ 2023թ. հոկտեմբերի 20-ի հանձնարարականը, հոկտեմբերի 24-ին որոշել է «Մաունթեն Բիֆ Քոմփանի» ՍՊԸ նախագահ՝ «Տոհմային տավարաբուծության նախագիծ» ԳԿ տնօրեն Մարտուն Պողոսյանի կողմից վարչապետին ուղղված գրության մեջ նշված փաստերի ուսումնասիրման նպատակով ստեղծել հանձնաժողով, հանձնաժողովի նախագահին հանձնարարել 15-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն կատարված աշխատանքի մասին:

Հ. Ղալումյանը հանձնաժողովի նախագահ է նշանակել Տավուշի մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանին, անդամներ՝ մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Աղաբեկ Գալստյանին, մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Վաղարշակ Սուքոյանին, մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ Արծրուն Նազարյանին, մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման եւ իրականացման բաժնի պետ Գուրգեն Հարությունյանին, մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման եւ իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Համլետ Փիրումյանին, Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին (իր համաձայնությամբ), Դիլիջանի համայնքապետարանի մասնագետ Լիպարիտ Սանթրոսյանին:

«Մաունթեն Բիֆ Քոմփանի» ՍՊԸ-ն եւ «Տոհմային տավարաբուծության նախագիծ» գյուղատնտեսական կոոպերատիվը գործում են Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրում: «Մաունթեն Բիֆ Քոմփանի» ՍՊԸ-ն զբաղվում է Աբերդին Անգուս ցեղատեսակի խոշոր եղջերավոր, մսատու կենդանիների բուծմամբ: Կորոնավիրուսի տնտեսական հետեւանքները չեզոքացնելու նպատակով կառավարությունը 2020 թ.-ին ընդունեց 2-րդ ծրագիրը: Այդ ծրագրի շրջանակներում կառավարությունը «Տոհմային տավարաբուծության նախագիծ» գյուղատնտեսական կոոպերատիվին տոհմային տավարաբուծության նպատակով տրամադրվող 30 միլիոն դրամ վարկը համաֆինանսավորել է 70 %-ով՝21 միլիոն դրամ գումարի չափով:

«Մաունթեն Բիֆ Քոմփանին» Գոշ գյուղում վարձակալել է 120 հեկտար, Խաչարձան գյուղում՝ 20 հեկտար խոտհարքներ ցրտադիմացկուն, թվով մոտ 70 Անգուս ցեղատեսակի կովերն արածեցնելու համար: Խնդիրներ են ծագել այդ 20 հեկտար խոտհարքների սահմանների ճշտման գործում, որի համար նամակ են ուղարկել վարչապետին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՍԵՎ ՈՒՐԲԱԹ

ՎԱՐՈՒՅԹ՝ 35 ՏՆՏԵՍՎԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հայաստանում նախորդ տարի սահմանված պահանջները խախտելու համար Սեւ ուրբաթի եւ Ամանորի զեղչերի ժամանակ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը վարույթ է հարուցել 35 տնտեսվարողների նկատմամբ, որոնք տուգանվել են 100 մլն դրամի չափով: Հանձնաժողովն այս տարի եւս Սեւ ուրբաթին եւ տոներին ընդառաջ ակցիաների ժամանակ դիտարկելու է տնտեսվարողների վարքագիծը, գնահատելու է ստացվող տարբեր ազդակները:

«Արմենպրես»-ի մամուլի սրահում հրավիրված՝ «Խորհուրդներ բիզնեսին զեղչերի եւ այլ ակցիաների իրականացման վերաբերյալ. իրազեկում Սեւ ուրբաթին ընդառաջ» թեմայով ասուլիսում այս մասին ասաց Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ Տիգրան Մարկոսյանը:

«Փորձով էր ապացուցված, որ մենք ակցիաների, այդ թվում՝ զեղչերի իրականացման ոլորտում ունենք բազում խնդիրներ, մասնավորապես՝ երբ որեւէ գնային փոփոխություն տեղի չէր ունենում զեղչի ժամանակ, շատ դեպքերում արհեստականորեն գինը բարձրացնում էին եւ այլն»,-ասաց Մարկոսյանը: Այս խնդիրները հավաքագրվել են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից: Արդյունքում որոշել են խնդիրները լուծել՝ օրենսդրական մակարդակում կարգավորումներ նախաձեռնելով: Մշակված «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքն ուժի մեջ է մտել 2022-ի հուլիսի 31-ից: Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը դրանից հետո՝ նախորդ տարի՝Սեւ ուրբաթին, նաեւ Ամանորին ընդառաջ, սկսել է ակտիվ մշտադիտարկման գործողություններ: Հանձնաժողովի անդամի գնահատմամբ՝ ներկայումս ոլորտն էականորեն բարելավվել է: Հանձնաժողովը դիտարկել է ավելի քան 80 ակցիա: «Դրա ընթացքում շուրջ 35 տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ վարույթներ են հարուցվել: Տնտեսվարողների մի մասը պատճառաբանել է, որ ակցիայի նոր օրենսդրությանը չի տիրապետել, մեղքն ընդունել է եւ խնդրել արագացված վարույթ կիրառել: Մի մասն էլ տարբեր պատճառներով ավելի ուշ է գիտակցել խնդիրը, ավելի ուշ ընդունել մեղքը: Արդյունքում իմ նշած 35 վարույթից մեծամասնության դեպքում ունեցել ենք մեղքի ընդունման փաստեր: Եվ այս բոլոր վարույթների առնչությամբ հանձնաժողովը կիրառել է շուրջ 100 մլն դրամի չափով տուգանք»,-ասաց Մարկոսյանը՝ հավելելով, որ վարույթները ներառում են նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցած ակցիաները: Հանձնաժողովը դիտարկումներ է իրականացնել տարբեր ոլորտներում՝ կենցաղային տեխնիկայի ոլորտում, հագուստի, շինանյութերի ոլորտում եւ այլն: Մարկոսյանը վստահեցրեց, որ հետեւողական են օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Գալիք Սեւ ուրբաթի եւ այլ ակցիաների առնչությամբ եւս դիտարկելու են տնտեսվարողների վարքագիծը, գնահատում են ստացվող տարբեր ազդակները: Մարկոսյանը ներկայացրեց կարգավորումները: Զեղչի տեսանկյունից առկա են մի քանի բովանդակային հիմնական պահանջներ:

«Առաջին հերթին՝զեղչի կիրառումը ձեւավորվում է՝ ոչ թե նախորդող մեկ օրվա գնի հետ կապված, այլ զեղչի մեկնարկին նախորդող 1 ամսվա ապրանքի միջին գնից: Եթե, օրինակ, տնտեսվարող սուբյեկտը 10 օր ունեցել է X գնով վաճառք, 12 օր՝Y, դրանից հետո մնացած 8 կամ 9 օրը ունեցել է երրորդ գնով, ապա պետք է թվաբանական միջին ստանալ, եւ այդ միջին գինը պետք է հիմք ընդունվի զեղչման տոկոսը որոշելիս, ոչ թե վերջին օրը բարձրացնել 200 տոկոսով, հետո իջեցնել 80 տոկոսով»,-ասաց Մարկոսյանը:

Ընդ որում՝ վաճառքի ընթացքում պետք է տեսանելի լինի այդ միջին գինը, այսինքն՝ սպառողի համար ջնջված գինը պետք է լինի միջին գինը: Զեղչը կարող է տեւել ոչ ավելի, քան 3 ամիս:

Տնտեսվարողը պարտավոր է իրազեկել, թե հայտարարված ակցիան ինչ ապրանքների շրջանակին է վերաբերում, պետք է նշի, թե ակցիան երբ է մեկնարկում, երբ է ավարտվում: «Կարող են հայտարարել զեղչ, գնաք խանութ, պարզվի, որ զեղչն արդեն ավարտված է: Սա անհարմարություն է սպառողների համար, նաեւ խայծ, որ մտնեք առեւտրի օբյեկտ եւ, հնարավոր է, որ որեւէ գնում կկատարեք»,-ասաց հանձնաժողովի անդամը: Եթե կան հատուկ պայմաններ, թե որ դեպքում է զեղչը կիրառվում, ապա տնտեսվարողը անպայման պետք է իրազեկի:

Կան նաեւ իրազեկման առումով պահանջներ: «Օրինակ՝ այնպես չլինի, որ 50 կամ 70 տոկոս զեղչ արտահայտությունը շատ մեծ լինի, իսկ դրա դիմաց գրված «մինչեւ» բառը շատ փոքր, որ սպառողը թակարդում չհայտնվի: Եթե գործ ունենք «մինչեւ X» տոկոս, այսինքն՝ միջակայքային զեղչի հետ, դա պետք է վերաբերի ապրանքների առնվազն 1/5-րդին: Շատ դեպքերում կարելի էր տեսնել շատ բարձր տոկոսով զեղչի հայտարարություն, սակայն առեւտրի օբյեկտ գնալիս պարզվում էր, որ ընդամենը 1-2 փոքրարժեք ապրանքին է դա վերաբերում»,-ասաց Մարկոսյանը: Նա շեշտեց, որ տնտեսվարողը զեղչի վերաբերյալ իրազեկումներում եւս պետք է լինի բարեխիղճ:

Ցանկացած բան, որը կարող է սպառողի մոտ թյուր տպավորություն կամ ապակողմնորոշում առաջացնել, մրցակցային օրենսդրության տեսանկյունից հանգեցնում է անբարեխիղճ մրցակցության՝ հասարակության մոլորեցման դրսեւորմամբ: Դրա հետեւանքն էլ այն է լինելու, որ տնտեսվարողը նախորդ տարվա հասույթի մինչեւ 5 տոկոսի չափով կարող է ենթարկվել պատասխանատվության:

ԼՈՒՐԵՐ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԲԱՆԿԵՐԸ ՀԵՏ ՈՒՂԱՐԿՈՒՄ

Հայաստանի կենտրոնական բանկը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին պետության կողմից տրվող 100 հազար դրամ միանվագ աջակցության շահառուների տվյալները պարբերաբար թարմացնում եւ փոխանցում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Այս մասին նշել են ՀՀ կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայությունից՝ ի պատասխան «Արմենպրես»-ի հարցմանը, որ որոշ շահառուներ 100 հազար դրամները դեռ չեն ստացել, քանի որ երբեմն բանկերի կողմից գումարները հետ են ուղարկվում, քարտերի եւ դրանց տվյալների հետ խնդիրներ են առաջանում:«Բնական է, որ նման ծավալի տեղեկատվության մշակման, ճշգրտման եւ փոխանցման ընթացքում, հնարավոր է, տեղ գտնեն տեխնիկական վրիպակներ, որոնք, սակայն, հնարավորինս օպերատիվ կերպով իրենց լուծումն են ստանում բոլոր ներգրավված կառույցների մասնագետների կողմից: Եթե շահառուն (բացի այն քարտից, որին գումար փոխանցելու խնդիր է առաջացել) ունի այլ քարտ, ապա գումարը փոխանցվում է այդ քարտին: Եթե շահառուն չունի այլ քարտ, ապա անհրաժեշտ է դիմել բանկ նոր քարտ ստանալու համար, որից հետո գումարը կփոխանցվի նոր թողարկված քարտին: Լրացուցիչ բոլոր պարզաբանումների համար անհրաժեշտ է դիմել Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը»,-հավելեցին Կենտրոնական բանկից: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի մամուլի քարտուղար Ջառա Մանուչարյանն էլ մանրամասնեց, որ փոխանցումը կատարվում է այն հաշվեհամարին, որը Կենտրոնական բանկից տրամադրվում է նախարարության միասնական սոցիալական ծառայությանը:

ՄՇԱԿՈՒՅԹ ԲՆԱՔՆՔՈՂԸ՝ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ

Ադրբեջանն ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի փոխնախագահ: Արցախում հայկական պատմամշակութային հետքը հետեւողականորեն, բարբարոսաբար ջնջող երկիրը, որ պետք է լիներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի թիրախում, դառնում է այդ կազմակերպության փոխնախագահ: Օրինակները շատ են, հիմնական նպատակը վերացնել հայկական գոյության նշանները եւ փաստերը: 2020 թվականից հետո վանդալիզմի ենթարկվեցին ադրբեջանական կողմի տիրապետության տակ անցած տարածքներում գտնվող հուշակոթողները, խաչքարերը, պատմական Սուրբ Ղազանչեցոց վանքը դարձրին մզկիթ՝ գմբեթը կլորացնելով: Ադրբեջանական զորքերը բարբարոսաբար կրակում էին խաչքարերի վրա, ավիրում դրանք:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամրագրված նպատակն է նպաստել խաղաղության եւ անվտանգության պահպանմանը՝ զարկ տալով միջազգային համագործակցությանը կրթության, գիտության եւ մշակույթի բնագավառներում բարեփոխումների իրականացման միջոցով: Այժմ, երբ ամբողջ Արցախը Ադրբեջանի տիրապետության տակ է, վտանգված են հայկական մշակույթը եւ արծեքները՝ եկեղեցիներ, խաչքարեր, գերեզմաններ, հուշակոթողներ, թանգարաններ, պատմական նմուշներ: Կասկածելի է արդյոք այժմ էլ, երբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի փոխնախագահ է ընտրվել Ադրբեջանը, կառույցը ջատագով կլինի հայկական մշակութային ժառանգության պահպանության հարցով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար. 3 մարդ զոհվել է, 19-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԿԱՐՈՂ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԼ 50 ՏՈԿՈՍՈՎ

Արցախից բռնի տեղահանված, ԱՊՊԱ պայմանագիր չունեցող վարորդները, նոյեմբերի 15-ից սկսած, կարող են իրենց ավտոմեքենան ապահովագրել 50 տոկոս ցածր վճարով: Տեղեկությունը հայտնում է Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոն: «Արցախի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործած ավտոտրանսպորտային միջոցների գծով մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը առցանց էլեկտրոնային եղանակով կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի ապահովագրավճարների հաշվարկում պետք է հիմք ընդունվի 50 տոկոսի չափով ավելի ցածր հիմնական ապահովագրավճար»,-նշված է հաղորդագրության մեջ:

Միաժամանակ ավտոտրանսպորտային միջոցը պետք է բավարարի հետեւյալ պայմաններին.

1.ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին հաշվառված է Արցախի Հանրապետությունում,

2.մինչեւ 2020 թվականի արտադրության է,

3.չի հանդիսանում պետական կամ համայնքային սեփականություն,

4.սեփականության իրավունքն ապահովագրի անվամբ գրանցվել է մինչեւ 2023 թվականի օգոստոսի 1-ը:

Նշվում է, որ նման որոշում է կայացվել՝ հաշվի առնելով այն փաստը, որ Արցախի Հանրապետության բնակչության բռնի տեղահանման հետեւանքով Հայաստանի Հանրապետության տարածք են մուտք գործել ԱՊՊԱ պայմանագիր չունեցող մեծ թվով ավտոմեքենաներ:

ՊԵՏՔ Է ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱՆ

«Նախադպրոցական կրթության մասին» օրենքի փոփոխությամբ սահմանվել է, որ պարտադիր լիցենզավորման են ենթակա ոչ միայն նախադպրոցական այլընտրանքային (բացառությամբ՝ փորձարարական), այլեւ նախադպրոցական ծառայությունների ծրագրերը:

ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի N 138-Ն հրամանով փոփոխություններ են կատարվել 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 81-Ն հրամանում՝ ազդարարելով գործընթացի մեկնարկը:

Այն կազմակերպությունները, որոնք իրականացնում են հեղինակային կամ այլընտրանքային կրթական ծրագրեր եւ մատուցում են նախադպրոցական ծառայություններ, պետք է իրենց ծրագրերը ներկայացնեն ԿԳՄՍ նախարարություն. փորձաքննությամբ հաստատվելուց հետո դրանք կկարողանան դիմել լիցենզավորման: Ըստ սահմանված ժամկետի՝ նախադպրոցական կրթական ծրագրերն ու ծառայությունները մինչեւ 2023 թ. դեկտեմբերի 30-ը պետք է գործունեության լիցենզիա ստանան, այլապես նրանց գործունեությունը կդիտվի անօրինական: Նախադպրոցական ծառայությունն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպության կամ դրա ստորաբաժանման կողմից նախադպրոցական տարիքի երեխայի կրթությանը եւ զարգացմանը միտված ծառայություն է, որն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած ծրագրի հիման վրա:

ՀԱՐՑՈՒՄ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՒ ԱԺ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԺԳՈՀ ԵՆ

«Գելափ»-ը ներկայացրել է ՀՀ անվտանգային եւ ներքաղաքական խնդիրների վերաբերյալ հարցումների արդյունքները:

Հարցին, թե դեպի որ երկիր կամ երկրներ պետք է ուղղվի ՀՀ քաղաքական վեկտորը, 40%-ը նշել է, որ Հայաստանը պետք է ունենա հավասար հարաբերություններ ազդեցության կենտրոնների հետ, Եվրոպական միության հետ նշել է 17%-ը, Ռուսաստան՝ 14 %-ը: Ըստ Արմեն Նավասարդյանի՝2020 թվականի հունիսին դեպի ՌԴ էր նշել հարցվածների 25%-ը, եւ այս առումով նվազում է եղել: 13 %-ը կարծում է, որ ՀՀ քաղաքական վեկտորը պետք է ուղղվի դեպի ԱՄՆ, 4,8 %-ը՝Իրան, այլ երկրներ՝3,5 %:

Որ երկրներից կարելի է ստանալ ռազմաքաղաքական օգնություն մեր երկրի համար հարցին հարցվածների 41,1%-ը պատասխանել է Ֆրանսիա, Ռուսաստան՝ 14,4%-ը, Իրան՝18,7%-ը, ԱՄՆ՝23%-ը, Հնդկաստան՝21,3%-ը, Չինաստան՝1,8%-ը:

Հաջորդ հարցումը վերաբերում էր այն հարցին, թե արդյոք ՀՀ-ում կան քաղբանտարկյալներ:

Հարցվածների 52%-ը նշել է, որ, այո, կան, 23%-ը նշել է՝չկան, 25%-ը դժվարացել է պատասխանել:

Հաջորդ՝ եթե կան, ապա ովքեր են քաղբանտարկյալներ հարցին 47,2%-ը նշել է ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանի անունը, «Հանրային ձայն» կուսակցության նախագահ Արտակ Գալստյանին նշել է հարցվածների 21,5%-ը, Վանաձորի քաղաքապետ Մամիկոն Ասլանյանին՝19,1%-ը:

Հարցին՝որքանով եք վստահում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, հարցվածների 20,4 %-ը նշել է, որ լիովին վստահում է, ավելի շուտ վստահում եմ՝13,2 %-ը, ավելի շուտ չեմ վստահում՝ 18,6%-ը, ընդհանրապես չեմ վստահում՝ 35,5%-ը, 12,3%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին:

Եթե առաջիկա կիրակի օրը լինեին խորհրդարանական ընտրություններ, որ կուսակցության կամ դաշինքի օգտին կքվեարկեիք հարցին 15,6%-ը պատասխանել է, որ կքվեարկեր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին, «Հայաստան» դաշինքի օգտին՝ 4,7%-ը, «Հանրային ձայն» կուսակցության օգտին՝ 2,5%-ը, «Բարգավաճ Հայաստան»՝ 2,1%, «Հանրապետություն» կուսակցություն՝ 2%, «Պատիվ ունեմ» դաշինք՝1,2%, «Ազգային ժողովրդավարական բեւեռ»՝0,4%, «Քրիստոնեա-ժողովրդավարական» կուսակցություն՝0,2%, «Ուժը հայրենյաց»՝0,2%, «Լուսավոր Հայաստան»՝ 0,2%, «Քաղաքացու որոշում»՝0,1%: 23,5%-ը նշել է, որ չի մասնակցելու ընտրություններին:

«Գելափի» հայաստանյան գրասենյակի տնօրեն Արման Նավասարդյանի խոսքով՝ հարցվածների մոտ 80%-ը չի վստահում ոչ մի քաղաքական ուժի:

«Գելափ»-ը ներկայացրել է ՀՀ անվտանգային եւ ներքաղաքական խնդիրների վերաբերյալ հարցումների արդյունքները:

Սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի զինված հարձակման պատճառով Արցախը լիովին հայաթափվեց, եւ ավելի քան 100,000 մարդ տեղահանվեց ու գաղթեց Հայաստան: Ինչպե՞ս պետք է վարվի Հայաստանի Հանրապետությունը:

ՀՀ-ն պետք է պայքարի անկախ Արցախի Հանրապետության համար, որից հետո արցախահայությունը պետք է վերադառնա իրենց տները: Հարցվածների 46,6%-ը այսպես է պատասխանել վերոնշյալ հարցին, 40%-ը պատասխանել է, որ ՀՀ-ն պետք է ինտեգրի արցախցիներին եւ հոգ տանի սոցիալական ու այլ իրավունքների համար:

9,2%-ը կարծում է, որ ՀՀ-ն պետք է անի առավելագույնը, որպեսզի Արցախի հայությունը հնարավորություն ունենա վերադառնալ Արցախ եւ ստանա անհրաժեշտ անվտանգային ու սոցիալական հարցերի լուծում՝ ազգային փոքրամասնության կամ այլ կարգավիճակով՝ Ադրբեջանի կազմում, 3,2 %-ը դժվարացել է պատասխանել այս հարցին:

«Գելափ»-ը ներկայացրել է ՀՀ անվտանգային եւ ներքաղաքական խնդիրների վերաբերյալ հարցումների արդյունքները:

Ինչպես եք գնահատում ՀՀ նախագահի, ԱԺ-ի, կառավարության ու վարչապետի գործունեությունը հարցին հարցվածների 34 %-ը հավանություն է տվել վարչապետի գործունեությանը, 52,6%-ը նշել է, որ հավանություն չի տալիս:

29,1%-ը հավանություն է տվել կառավարության գործունեությանը, 57,7 %-ը նշել է, որ հավանություն չի տալիս:

ԱԺ-ի գործունեությանը հավանություն է տվել 22,2%-ը, իսկ 64%-ը հավանություն չի տվել:

ՀՀ նախագահի գործունեությանը հավանություն է տվել հարցվածների 23%-ը, հավանություն չի տվել 53,7%-ը:

«Գելափի» հայաստանյան գրասենյակի տնօրեն Արման Նավասարդյանի խոսքով՝ ամենավատ ցուցանիշը գրանցել է Ազգային ժողովը:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՄԱԿ

ՈՂՋՈՒՆԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԼՈՒՅԹԸ

«Գարդման-Շիրվան-Նախիջեւան» համահայկական միությունը ողջունել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար Ֆիլիպո Գրանդիի ելույթը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում, որում վերջինս անդրադարձել է Լեռնային Ղարաբաղի ողջ հայ բնակչության հայրենազրկման խնդրին:

Միությունն այդ մասին հայտարարություն է տարածել, որը ներկայացնում ենք ստորեւ.

«Ինչպես հայտնի է, 2023թ. հոկտեմբերի 31-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում փախստականների հարցերով գերագույն հանձնակատար Ֆիլիպո Գրանդին իր ելույթում անդրադարձել է բռնի տեղահանվածների՝ այսօր չափազանց զգայուն դարձած խնդրին՝ ՄԱԿ-ի ԱԽ ուշադրությունը հրավիրելով աշխարհի մի շարք վայրերում բոլորովին վերջերս տեղի ունեցած այլեւս անշրջելի գործընթացների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի ողջ հայ բնակչության հայրենազրկման խնդրին: Գերագույն հանձնակատարն իր խոսքում մասնավորապես արձանագրել է, որ հաշված օրերի ընթացքում ավելի քան 100 հազար հայեր հեռացել են Լեռնային Ղարաբաղից եւ ապաստան գտել Հայաստանում: Հանձնակատարը սա իրավացիորեն համարում է մեկ այլ չլուծված խնդրի հետեւանք, որին թույլ է տրվել «եփվել» տասնամյակներ շարունակ: «Գարդման-Շիրվան-Նախիջեւան» համահայկական միությունը խորապես շնորհակալ է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարին այս արդարացի արձանագրման համար: Այն հուշում է, որ ապագայի հանցագործությունները հնարավոր է կանխել միայն այսօր կատարվածների համար դրանց հեղինակներին պատասխանատվության կոչելու միջոցով: Այո՛, Լեռնային Ղարաբաղի հայության նկատմամբ ավելի քան 10 ամիս ցեղասպան եւ ահաբեկչական վարքը, Լեռնային Ղարաբաղի ամբողջական եւ բռնի հայաթափումը հետեւանք են մեկ այլ՝ առավել մեծ խնդրի, եւ այդ խնդիրն է Ադրբեջանի հակահայկական, ռասիստական եւ կրոնական խտրական պետական քաղաքականությունը, որն անշեղորեն «եփվել է» անցած տասնամյակների ընթացքում: Վերջին հարյուրամյակում քանիցս հայ տարրը պատմական Գարդմանի, Շիրվանի, Նախիջեւանի տարածքում ենթարկվել է էթնիկ զտման եւ բռնի տեղահանման, որի համար ոչ ոք միջազգային պատասխանատվություն չի կրել: Եթե պատժվեին 1918թ. Բաքվի հայության կոտորածի կազմակերպիչները, վստահաբար չէին լինի 1988թ. Սումգայիթի, 1990թ. Բաքվի հայկական ջարդերը: Եթե 1988-1992թթ. ավելի քան կես միլիոն հայության բռնագաղթման համար Ադրբեջանը պատասխանատվություն կրեր, չէր լինի 2020-2023թթ. Լեռնային Ղարաբաղի հայության տեղահանությունը, որն ուղեկցվել է մարդու իրավունքների բազմակի խախտումներով՝ սովամահության պարտադրանքով, մանկասպանությամբ, առեւանգումներով, բռնությամբ կամ դրա սպառնալիքով, վախի եւ ատելության տրամադրությունների գերակայմամբ:

Ուստի, մենք կոչ ենք անում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարին եւ ողջ միջազգային հանրությանը համարժեք եւ գործնականորեն արձագանքել քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ տեղի ունեցող զազրելի հանցանքներին եւ ձեռնամուխ լինել դրանց հեղինակների միջազգային պատժին: Մենք խնդրում ենք գործնական քայլեր կատարել ինչպես 2020-2023թթ. Լեռնային Ղարաբաղից բռնագաղթվածների, այնպես էլ մեր՝ 1988-1992թթ. պատմական Գարդմանի, Շիրվանի, Նախիջեւանի տարածքից տեղահանվածներիս բոլոր իրավունքների արդարացի վերականգնման ուղղությամբ»:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ԹԱՏՐՈՆԸ՝ 40 ՏԱՐԻ ԱՆՑ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Սանկտ Պետերբուրգի՝ ավելի քան 250 տարվա պատմություն ունեցող Ալեքսանդրինյան թատրոնը քառասուն տարվա ընդմիջումից հետո կրկին Երեւանում է: Լեգենդար թատրոնը Հայաստանում է հյուրընկալվել Երեւանյան միջազգային թատերական փառատոնի շրջանակում եւ հանդես կգա Նիկոլայ Գոգոլի «Ամուսնության», Վալերի Սեմենովսկու «Արարածը» ներկայացումներով: Նոյեմբերի 10-ին Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում Ալեքսանդրինյան թատրոնը հանդիսատեսին ներկայացրեց «Ամուսնություն» բեմադրությունը, որը երեւանյան բեմում կլինի նաեւ նոյեմբերի 11-ին: Դասական պիեսը, որը բեմադրվել է՝ պահպանելով Ալեքսանդրինյան թատրոնի ավանդույթները, արժանացավ բուռն ծափողջույնների, «բրավո» վանկարկումների: Սունդուկյանի անվան թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանը հիշեցրեց՝ մեկ ամիս առաջ Մայր թատրոնը փայլուն եւ անմոռանալի հյուրախաղերով հանդես է եկել Սանկտ Պետերբուրգում՝ ներկայացնելով Արմեն Էլբակյանի, Լիլի Էլբակյանի բեմադրությունները:

«Արմեն Էլբակյանի «Թռիչք կկվի բնի վրայով» ներկայացումը խաղացել ենք Ալեքսանդրինյան թատրոնի մեծ եւ պատմական բեմում: Դա պատմական իրադարձություն էր, նոր էջ հայ եւ ռուս թատրոնների համար»,-ընդգծեց Մկրտչյանը՝ վստահեցնելով, որ թատրոնների համագործակցությունը շարունակական կլինի: Ալեքսանդրինյան թատրոնի գեղարվեստական ղեկավար Վալերի Ֆոկինը, որը նաեւ «Ամուսնություն» ներկայացման ռեժիսորն է, շեշտեց՝ ցուցադրելու են այն ներկայացումները, որոնք իրենց թատրոնի դիմագիծն են: «Մեր թատրոնը պատմական է, 257 տարեկան է, սակայն դուք շատ լավ հասկանում եք՝ եթե բեմում էլ այդ տարիքի դերասաններ լինեն, մահացու կլինի, ուստի մեր խնդիրն է չհամապատասխանել այդ փառահեղ տարիքին: Ինչու փառահեղ՝ քանի որ կան փառահեղ ավանդույթներ, որոնք պետք է պահպանել եւ միեւնույն ժամանակ դրանք համապատասխանեցնել մեր օրերին»,- ասաց նա եւ հավելեց՝ քաղաքական գործիչներն այրում են կամուրջները, իսկ արվեստի գործիչները վերականգնում դրանք: Անդրադառնալով «Ամուսնություն» ներկայացմանը, որը տասնհինգ տարեկան է, Ֆոկինն ընդգծեց՝ անկախ նրանից, թե երբ է բեմադրվում ներկայացումը, իրենք անում են ամեն բան, որ այն համապատասխանի օրվա իրականությանը, այն ամենին, ինչ տեղի է ունենում պատուհանից այն կողմ, կյանքում: «Մենք հետեւում ենք, որ ներկայացումը լինի կենդանի: Այս ներկայացումը ինքդ քեզ պահպանելու մասին է: Գուցե դա տարօրինակ թվա, քանի որ պիեսը կատակերգական է, բայց մենք նրան մոտեցել ենք այն տեսանկյունից, որ գլխավոր հերոսը կարողանում է պահպանել իր մարդկային նկարագիրը, մարդկային անկախությունը: Այս թեման հավերժական է. այդպես էլ եղել քսան, հարյուր եւ հազար տարի առաջ»,- նշեց Վալերի Ֆոկինը: Ալեքսանդրինյան թատրոնի տնօրեն Սերգեյ Եմելյանովն էլ նշանակալի համարեց այն, որ տարվա ընթացքում Սունդուկյանի անվան թատրոնի հետ բազմաբնույթ ծրագրեր են իրականացրել, որոնցից է «Ազգային թատերական դպրոց»-ը, երբ Սանկտ Պետերբուրգից թատրոնի լավագույն մասնագետները դասեր են անցկացրել Հայաստանում երիտասարդ դերասանների հետ, իսկ սեպտեմբերին Մայր թատրոնի թատերախումբն Ալեքսանդրինյան թատրոնում հանդես է եկել մի քանի հազար հանդիսատեսի առաջ: «Մենք մեր ժամանակակից պատմության ընթացքում դեռ այսքան սերտ չենք համագործակցել, այսքան ստեղծագործական ու գործնական կապ երկու ազգային թատրոնների միջեւ դեռ չի եղել:

Հուսամ՝ առաջիկայում եւս կաշխատենք»,- ասաց Եմելյանովը:

ԱՀԱՋԱՆԳ

ԹՈՒՅԼ ՉԵՆ ՏՎԵԼ ՄՏՆԵԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Գեղարքունիքի մարզի բնակիչն ահազանգել է ArmLur.am-ի խմբագրություն եւ բողոքել, որ իրեն թույլ չեն տվել Ազգային գրադարան մուտք գործել վավերականության ժամկետն անց քարտ ունենալու պատճառով: Բնակչի խոսքով՝ նա 10 տարուց ավելի է, ինչ Ազգային գրադարանի ընթերցող է.

«Շատ տհաճ միջադեպ էր, որը կարող էր եւ տեղի չունենալ: Նոյեմբերի 9-ին մտնում եմ Ազգային գրադարան հերթական անգամ այնտեղ դաս անելու: Պահպանության աշխատակցին մոտեցա եւ ասացի, որ մոռացել եմ ընթերցողական քարտս, բայց կարող եմ փոխարենը ցույց տալ աշխատանքային էջս կամ անձնագիրս, սակայն չհամաձայնեց»,- պատմեց քաղաքացին:

Ըստ քաղաքացու՝ միայն համակարգչային գրանցման բազայում պարզվեց, որ իր ընթերցողական քարտի վավերականության ժամկետն անցել է, եւ ինչպես նա է նշում, միայն բանավոր խոսքի միջոցով հայտնի դարձավ, որ Ազգային գրադարանում ընթերցողական քարտի վավերականության ժամկետը 5 տարի է:

«Ինձ հետաքրքրում է՝ որտեղ է ամրագրված այդ 5 տարին, ինչու ինձ ծանուցում չի հաղորդվել, որ իմ քարտի ժամկետն անցել է, եւ ինչու ես իմ ժամկետնանց քարտով այս տարվա մեջ մի քանի անգամ կարողացել եմ օգտվել Ազգային գրադարանից: Արդյո՞ք Ազգային գրադարանի աշխատակիցները համապատասխանում են Ազգային գրադարանի չափորոշիչներին»,-վրդովված նկատեց քաղաքացին:

Մեզ ահազանգած քաղաքացին ասաց, որ փորձել է բոլոր հնարավոր միջոցներով կապ հաստատել պատասխանատուների հետ, սակայն կամ չեն պատասխանել, կամ էլ կեսից անջատել են հեռախոսը՝ պնդելով, որ հեռախոսակապի խնդիր ունեն:

ArmLur.am-ը հասկանալու համար, թե ինչ է կատարվել, եւ ինչու է նման միջադեպ գրանցվել գրադարանում, փորձեց կապ հաստատել անձամբ պատասխանատուների հետ:

Ազգային գրադարանի տնօրենի խորհրդատու, հասարակական կապերի բաժնի պետ Ներսես Հայրապետյանը մեզ հետ զրույցում մանրամասնեց. «Ազգային գրադարանն ունի գրադարանից օգտվելու իր կանոնակարգը, եւ ոչ մեկ իրավունք չունի այն խախտելու, այդ թվում՝ ես եւ տնօրենը: Գրադարանից օգտվելու համար անհրաժեշտ էր ունենալ վավեր ընթերցողական տոմս, ինչն այդ պահին քաղաքացին չի ունեցել: Ժամկետի մասին ծանուցելու կարիք չկա, քանի որ տոմսի վրա հստակ նշվում է լրանալու ժամկետը: Ինչ վերաբերում է անվավեր տոմսով գրադարանից օգտվելուն, ապա հնարավոր եղել է, բայց առանց հիմքերի ոչինչ ասել չեմ կարող»,- եզրափակեց Ներսես Հայրապետյանը:

Հավելենք, որ ընթերցողական տոմս ստանալու համար անհրաժեշտ էր միայն անձնագիր եւ 3/4 չափի լուսանկար:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՍՊՈՐՏ

ԴԵ ԽԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒՄ Է

«Մանչեսթեր Յունայթեդի» նախկին դարպասապահ Դավիդ Դե Խեան մոտ է իսպանական «Բետիսին» միանալուն. հաղորդում է Estadio Deportivo-ն: 33-ամյա ֆուտբոլիստն այժմ բանակցում է «Բետիսի» հետ: Քննարկվում է հունվարին կես տարվա պայմանագիր կնքելու տարբերակը: Ամռանն ազատ գործակալի կարգավիճակում «Մանչեսթեր Յունայթեդից» հեռանալուց հետո Դե Խեան չունի թիմ: Նա անգլիական ակումբում էր հանդես գալիս 2011 թվականից՝ 545 խաղում բաց թողնելով 590 գոլ, 190 խաղում անառիկ պահելով դարպասը:

ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼԱԿԻՐՆԵՐ ԵՆ

Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում մեկնարկած սամբոյի աշխարհի առաջնությունում Հայաստանի ներկայացուցիչները նվաճել են առաջին մեդալները: Մարտական սամբոյի 79 կգ քաշային կարգում Սարգիս Վարդանյանը պարտվել է կիսաեզրափակչում եւ դարձել է բրոնզե մեդալակիր: Մարտական սամբոյի 98 կգ քաշային կարգում Արման Ավանեսյանը մեկնարկել է հաղթանակով, սակայն պարտություն է կրել կիսաեզրափակչում եւ նույնպես բավարարվել է բրոնզե մեդալով:

ԱՐԺԱՆԻ ԷՐ ՀԱՂԹԱՆԱԿԻ

Իտալական «Ռոմայի» պորտուգալացի գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյոն մեկնաբանել է չեխական «Սլավիայից» կրած 0:2 հաշվով պարտությունը Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարի չորրորդ տուրում:

«Այո, «Սլավիան» իսկապես արժանի էր հաղթանակի, իսկ մենք արժանի էինք պարտության: «Սլավիան» խաղաց այնպես, ինչպես Հռոմում էր խաղացել: Մենք պատրաստվում էինք այս խաղում էլ Շաարավիին թողնել հարձակվողի դիրքում, իսկ Ջալեւսկիին տեղափոխել եզր, բայց դա չէր մեր պարտության պատճառը: Ոչինչ չհավանեցի մեր խաղում: Միայն Էդուարդո Բովեի խաղը հավանեցի: Միայն նա էր արժանի հաղթանակի, բայց մեկ ֆուտբոլիստով հնարավոր չէ հաղթել»,- Մոուրինյոյի խոսքը մեջբերում է ՈՒԵՖԱ-ի մամուլի ծառայությունը: G խմբում «Սլավիան» ու «Ռոման» 9 միավորով առաջին երկու տեղերում են:

ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՏԵՂԱՓՈԽՎԵԼ

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» եւ Կանադայի հավաքականի պաշտպան Ալֆոնսո Դեւիսը ցանկանում է կարիերան շարունակել Մադրիդի «Ռեալում», որը հետաքրքրված է նրա ծառայություններով. հաղորդում է Sport1-ը: Արդեն կես տարի Ալֆոնսո Դեւիսը չի բանակցում «Բավարիայի» հետ պայմանագրի երկարաձգման հարցով: Արքայական ակումբի ներկայացուցիչները ֆուտբոլիստի գործակալին հորդորել են չերկարաձգել «Բավարիայի» հետ Դեւիսի պայմանագիրը, որը նախատեսված է մինչեւ 2025թ. հունիս:

● *Հայաստանի ազգային գրադարանը լայն լսարանին ներկայացրեց «Եղիշե Չարենց. Մատենագիտություն» գիրքը:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ես կարո՞ղ եմ միանգամից Սահմանադրական դատարան դիմել:

Արտակ Տեր-Տերյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների եւ ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաեւ համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

ՀՀ Սահմանադրական դատարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օրենքով սահմանված կարգով՝ թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձինք կարող են դիմել Սահմանադրական դատարան:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Քանի՞ տարի վավերականության ժամկետով է տրամադրվում ՀՀ քաղաքացու անձնագիրը կամ նույնականացման քարտը:

Անի Խաչատուրով (25 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ կառավարության 25.12.1998թ. թիվ 821 որոշման եւ «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝

- մինչեւ 6 տարեկան քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է 3 տարի վավերականության ժամկետով,
- 6 տարեկանից մինչեւ 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 5 տարի վավերականության ժամկետով,
- 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 10 տարի վավերականության ժամկետով,
- մինչեւ 16 տարեկան, ինչպես նաեւ 16 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին անձնագրերը տրամադրվում են մինչեւ նրանց 19 տարին լրանալը, իսկ 19 տարին լրացած լինելու դեպքում՝ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով տրված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման կամ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կամ 8-րդ մասով կամ 29-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված բժշկական վերափորձաքննության ժամկետով: Պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության լիազոր պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարի միջնորդությամբ 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին անձնագիր կարող է տրամադրվել նաեւ այլ ժամկետով՝ ուսման, բուժման, մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցելու նպատակով:

ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նույնականացման քարտը 16 տարին լրացած քաղաքացիներին տրամադրվում է 10 տարի վավերականության ժամկետով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացավ սամբոյի աշխարհի առաջնության բացման արարողությունը: Այս առաջնությանը, ընդհանուր առմամբ, մասնակցում են 70 երկրների 500-ից ավելի մարզիկներ, իսկ ընդհանուր պատվիրակությունների թիվը կգերազանցի 2500-ը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ
1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



	Շիրակ	-2 +2 +12 +16
	Կոտայքի լեռներ	-2 +1 +11 +16
	Կոտայքի նախալեռներ	+4 +6 +16 +18
	Գեղարքունիք	-2 +2 +9 +13
	Լոռի	-2 +3 +12 +15
	Տավուշ	+2 +7 +13 +17
	Արագածոտնի լեռներ	-2 +1 +9 +11
	Արագածոտնի նախալեռներ	+4 +7 +14 +18

	Արարատ	+3 +7 +18 +20
	Արմավիր	+2 +5 +17 +19
	Վայոց ձորի լեռներ	-1 +1 +9 +13
	Վայոց ձորի նախալեռներ	+3 +7 +17 +20
	Սյունիքի հովիտներ	+6 +10 +17 +21
	Սյունիքի նախալեռներ	0 +5 +11 +15
	ԼՂՀ	+6 +10 +16 +20
	Երեւան	+9 +10 +20 +22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*